# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Հուլիսի 16-ին ԱՄՆ՝ Դեյտրոյտ մեկնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը՝ ներկա գտնվելու և անձամբ նախագահելու ազգային մեծ բարերար Ալեք Մանուկյանի հուղարկավորության արարողությանը:*

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Իմ խօսքին անցնելէ առաջ, սրտի պարտք կը զգամ իմ խոր վիշտը անձնապէս եւ ձեր բոլորի անունով յայտնելու օդանաւի այն աղէտալի արկածին համար, որ երէկ գիշեր պատահեցաւ, եւ որուն զոհ գնացին 229 անձեր: Պարտք կը զգամ ցաւակցութիւններս յայտնելու այս երկրի իշխանութեանց եւ բոլոր ննջեցեալներու ծնողներուն, ազգականներուն եւ բարեկամներուն՝ աղօթելով առ Աստուած, որ ննջեցեալներուն, անմեղ ննջեցեալներուն հոգիները երկնային խաղաղութեան մէջ հանգչեցնէ: Թող այս երկրին եւ բոլոր երկիրներուն խնայուի նման ողբերգական արկածներ:

Before I begin to speak about the passing away of the great figure of our Armenian community of America Mr. Alex Manoogian and giving my testimony, consider it as a duty of heart and mind and soul to express my deep grief abont the passing away of 229 people yesterday evening as victims of a tragic accident of airplane in Washington area. I associate myself and through me all of you in expressing our deep condolences to the authorities of this country and also to the parents and relatives of the departed ones, the innocent victims, who lost their lives. I pray God to spare such tragic events to this country and to any country, and may God receive their souls in eternal peace and bliss.

Այսօր այնպիսի օր մը կ'ապրինք բոլորս, որ անմոռանալի պիտի մնայ մեր բոլորի անձնական կենսագրութեան մէջ եւ մեր հայ ժողովուրդի եւ յատկապէս Ամերիկայի եւ ամերիկահայ պատմութեան մէջ:

Թաղարկաւորութեան, թաղման այս արարողութիւնը սովորական իմաստով արարողութիւն մը չէ, դէպք մըն է, դէպք մը՝ իմաստ ունեցող իւրաքանչիւրիս համար: Եւ առաջին իմ խօսքը այսօր ձեզի ուղղելէն առաջ ես կ'ուղղեմ այս դագաղին մէջ հանգչող այն անձին, որ այժմ իր մարմնեղէն ականջներով մեզ չի կրնար լսել, բայց կը հաւատամ, որ երկնային իր կայքէն կը դիտէ մեզ, կը լսէ մեզ:

*«Ցարգա՛նք քեզ, ազնուական զաւակ հայ ժողովուրդի եւ պատուաբեր*



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԱԾ ՀԲԸՄ ՑԿՅԱՆՍ ՆԱԽԱԳԱՀ, ՀԱՅ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

*քաղաքացի Ամերիկայի: Դուն կեանքովդ մահը յաղթեցիր: Այսօր քու մահուանդ մասին չենք մտածեր, կը մտածենք քու կեանքիդ մասին: Այսօր դէպք մըն է, որ կը պատահի մեր կեանքին մէջ: Որովհետեւ, կեանքի դաս մըն է, կեանքի դասագիրք մըն է, որ կը բացուի մեր բոլորի հայեցողութեան եւ գիտակցութեան մէջ:*

*Դիտէ՛ երկինքէն, ո՜վ Մանուկեան Ալեք, բարեկամ, հարազատ եղբայր, դիտէ՛ եւ տե՛ս, թէ ի՞նչ կը պատահի երկրի վրայ: Տե՛ս այս բազմութիւնը այսօր, ինչպէս հաւաքուած են աշխարհի չորս կողմերէն՝ Ամերիկայէն մինչեւ Աւստրալիա, Պրազիլէն մինչեւ Միջին Արեւելք, Եւրոպա, Գանատա ու մեր մայր հայրենիք Հայաստանէն: Այս համախմբումը ինքնին, առանց խօսքի ամենէն պերճախօս վկայութիւնն է այն ճշմարտութեան, որ* սէրը կը պատասխանուի սիրով: *Կեանքդ ամբողջ, 95 տարիներ, եղաւ սիրոյ ճառագայթում, աստուածային սիրոյն ճառագայթը աշխարհի չորս կողմերը սփռուած քու անձին եւ գործին մէջէն: Եւ այսօր քու սէրդ է, որ սիրով կը փոխարինուի Եկեղեցիին եւ ազգին կողմէ: Այս բոլոր ներկաներուն հարազատ հոգիով, անկեղծ սիրով ներկայութիւնը եւ յարգանքը, որ կ'ընծայուի քեզի, շօշափելի եւ պերճախօս փաստն են այդ ճշմարտութեան»:*

Today as Scriptural reading I have chosen a few verses from the Gospel of Saint Matthew in which God as the Judge of all receives his children who present themselves to him, to their creator at the end of their life on earth. He turns to them individually, and corporately as nations, and says to some of them, *"Stand on my right hand"*.

That passage has been one of the most capturing and inspiring passages for me and I helieve also for you.

Let us first hear the word of God as registered in the Gospel text:

*"Come, O blessed of my Father, inherit the kingdom prepared for you from the foundation of the world; for I was hungry and you gave me food, I was thirsty and you gave me drink, I was a stranger and you welcomed me, I was naked and you clothed me, I was sick and you visited me, I was in prison and you came to me". Then the righteous will answer him, "Lord, when did we see thee hungry and feed thee, or thirsty and give thee drink? And when did we see thee a stranger and welcome thee, or naked and clothe thee? And when did we see thee sick or in prison and visit thee? And the King will answer them, "Truly, I say to you, as you did it to one of the least of these my brethren, you did it to me". Then he will say to those at his left hand, "Depart from me, you cursed, into the eternal fire prepared for the devil and his angels" (**Matthew, 25:34-41**).*

I believe I cannot add any word to the Word of God, unchangeable Word, indeed. But I think, deep in my heart I believe, that when Alex will be presenting

himself to God, God will add a few other words to the ones that I just quoted. God will say to Alex Manoogian: *"I was a small child and a youngster and I did not have any means to go to school, and you built schools and you sent me to school"*. God will say to Alex Manoogian: *"I was a person of letters and arts. I was a writer, I was an artist, I was a scientist, I was a scholar and I was prevented from manifesting in concrete ways my talents and my skills and you gave me the possibility of writing and putting into service the skills that God had given me"*.

I imagine now, together with you, how many thousands of children have him, Alex Manoogian in their hearts, how many leaders of thought and servants of the Church and of culture benefited from him and owe to him so much of the possibilities of their creative service to humankind and to the Armenian people!

My dear fiends, today I believe that we are the witnesses of a life which is full of great events and achievements. Today his very death has turned into an event reminding us of the meaning of life and also of our responsibility towards what God has given to us as the greatest of all gifts — life. How we relate ourselves to life? That is what makes our merit. We are not the masters of life; we are the stewards of life. And the way in which we relate ourselves to life we relate ourselves to the giver of life — God.

The love of God, if it is not manifested through the love towards one another, then one may ask: what is the meaning, the ultimate meaning of such love? Love of God, the source of life that is given to us to manifest it in our earthly existence by sharing what God has given to us with the members of His family — humankind, as we learned from the Gospel of Saint Matthew.

At this moment I would like to visualize the person that I have known for more than 30 years as a human person composed, so to speak, of three constituent elements of great value.

*The first element:* Alex Manoogian was a *Christian*. The Christian faith, that source of creative life, was embodied in his heart and mind, in his will and soul, in his life and in his service, within the context and tradition, liturgical spirituality and the mission, and the culture and the history of the Armenian Apostolic Church. From the early days of his life he was fully integrated in the life of that church. For him the church was intertwined with his whole existence. A few years ago here you celebrated the 80th anniversary of his direct and active involvement in the Armenian Church.

I can visualize, together with you, how many clergymen pursued their higher education, promoted their theological training through the services of Mr. Alex Manoogian. He rejoiced in the achievements of the Armenian Church and he suffered also for the lack of the unity, for the weakness of the mission. He

suffered when he found internal family administrative quarrels within the church, and he rejoiced and worked hard with his whole firm and committed conviction for the recovery of that unshakable unity and its manifestation in the concrete life of our church. Alex Manoogian had the Holy See, the Mother See of Etchmiadzin present in the deepest part of his heart. That place where we were born as a nation, as a Christian nation was sacred to him because it was the spiritual Center of the Church. I know how much he devoted himself to the renewal and the promotion of the mission of the Mother See of Holy Etchmiadzin.

Today I have brought with me, from Holy Etchmiadzin, a tombstone, a memorial cross carved on stone, a *Khachkar* with his name inscribed on it and it will be placed on his grave just in a few hours' time.

"Rejoice, Oh Manoogian, rejoice by seeing the entire Armenian church present here and all the Armenian people from different shades, from different persuasions are united in rendering this great homage". I see and I rejoice that our other hierarchical Sees also participate, the Catholicos of Cilicia by a message we heard yesterday evening and also by the telegrams of the Patriarchs of Jerusalem and of Constantinople. I welcome also here the presence of our Armenian Catholic and Armenian Evangelical Churches representatives.

He was a Christian, in the full sense of the word, because to be a Christian is to be a manifestation of God's love and the love interpreted, translated into action.

*Second element* - Alex Manoogian was *an Armenian*. Born in different conditions of life, far away from America, brought up with a couple, parents (and what a kind of coincidence — the name of the father being *Tagvor*, *Tagavor* and of the mother *Tagoohi*) he grew up in a strong sense of belonging to a national entity with the identity name of Armenian which he held in such high dignity all along his life. He was devoted to the language, to the school and to the culture. All that the Armenian nation had created and was part and parcel of his own existence. He spoke the language so fluently. He opened schools, he encouraged and promoted cultural centers around the world. And today I see in him the *Armenian people in miniature*.

He lived in the diaspora but his motherland lived in him all along his life. I witnessed personally, as many of you have done, that when the Independent Republic of Armenia was proclaimed that was his great day of joy. For he had seen the suffering of the people, the massacre of his nation, the genocide, as himself was a survivor. He had all the reasons to rejoice with the proclamation of Armenia's Independence.

The century was open in his life as in the lives of many of our fathers and mothers with the dark time of threatening death for a whole nation. And he lived

all this century, the twentieth century, by devoting himself to the perseverance, to the continuing creative life of the people of Armenia and the people of the diaspora.

Incidentally, my dear friends, I don't like very much the word *survival*. I prefer to use the expression *"continuing life creatively"*, not *survival* in the passive sense of the word, but creative pace and quality of life.

The Armenian history of the twentieth century cannot he written in its entirety without Alex Manoogian's name written in golden letters in the annals of our history of resurrection, a journey from death to life, from the cross to resurrection. That is the image that I have about this twentieth century. And what a great comfort to you hy seeing today the Armenian Independent Republic represented here with a special and high-ranking delegation sent by the President of the Republic of Armenia to sbare in the tribute that we are paying to his life and not to mourn his death.

*Third element* — Alex Manoogian was an *American*. Christian- Armenian-American: a triune constitution. He loved this country. He lived most of his life in this country. He came as a refugee and he became an honored and honor-generating citizen of this great country of America. He found in the American way of life all the possibilities of developing, promoting his human talents. He made a great contribution not only in the economic life, not only in the business world, but also in the cultural life of this country. Therefore, I believe, and I think also the rulers of this country of United States of America, of the State of Michigan and of this city of Detroit believe, that no one can write the history of this province and of the city without giving a dignified page to the part that Alex Manoogian played in the building of this nation in this part of the United States of America.

Here is a life, a human life that culminates like the dome of building established on the three pillars, namely, a *Christian identity*, an *Armenian identity* and an *American identity* held together in perfect barmony in the person of Alex Manoogian. That is the human image that we are saluting today, on the ninety-eighth year and the last moment of his life.

Now begins the other life for him. The life without the physical body. Today Alex Manoogian to me means a living textbook of life. Generations will come and read his life-book. I wish from the depth of my beart that the book that can be written abont him may become and should become a bestseller to tell how a person from the most modest and humblest conditions of life can go up with to such a high stage of life that he makes his own life become a radiant light for many generations to come.

*

* *

My dear friends, we are passing through most difficult times in our history here and in other parts of the world where human values are losing much of their greatness, of their appeal. A secularistic, technologically dominated and short-sighted way of life is the temptation of this century.

We need the nurture of the spiritual values; we need the nurture of intellectual values; we need the nurture of such values that enhance in us the human dignity in the form in which God created us and imprinted in us His image. We are created in the image of God. But wer are being tempted to lose, or to blur that image.

Alex Manoogian's life should be a reminder of such values which lead to the true quality of human life. That is where I would like today to consider this obituary, this testimony of mine, as a preface, however inadequate it may be, to that book in which the living aspects of his life will be shown forth, not statisties, not dates, not places, not figures, but the transforming events of his spirituality and his humanness which transcends all kinds of material achievements.

I came form Holy Etchmiadzin considering it as a duty of heart to render this tribute to him and to extend to his children, Loinse and Richard, and their children, to his brothers George and Charles, to their children, nephews and nieces, the young generation, my most sincere condolences because he bequeathed, transferred his fatherly love first to his family. How delighted I feel that that spirit is being carried on. I have come to tell you, my dear friends, continue ever increasingly to maintain that level of spirituality and dedication as the legacy of your great father.

I extend my condolences to the community of Detroit. I know well that Alex Manoogian was a patriarchal figure in this community. My condolences also to our diocese and all the Armenian church in the United States of America.

I extend my condolences to the governor, to the mayor and to and to all the civic authorities of this city and of this State, because they know very well, better than I, that they lost a citizen today who is not very easily to be found in this time of great crisis, what I call, cultural crisis. I pray God that his example will shine forth and will become a source of inspiration to all the people who are concerned about making their life worth living with the quality and not only with the length of time. In my understanding there are two kinds of people in this world, those whose life is measured by two criteria — *time* and *space*, the number of years and the place where they live. And there they end. That's the first kind of person. The other kind of person is the one who lives the life by transcending time and

space. They are projected in the history as an example for the coming generations. This category of people are the people who make history. Alex is an architect of history. Others follow history. They don't have anything to offer. What you give is what you leave as a value that transcends your physical existence. In this respect I will quote one of the most famous poets, from the greatest saints of our Church, Saint Gregory of Nareg of the tenth century. He said: «Ոչ ի տուրսն նայիմ, այլ ի տուողն». "I don't look to what is given only, I look to who is the giver".

And finally I would like to present my most sincere condolences to the Armenian General Benevolent Union. Alex Manoogian devoted most of his life to the promotion of this great humanitarian, philanthropic and also nation-building type of organization. I present my condolences and my sympathy and my solidarity with the Board of Directors of the AGBU who are called to continue and to promote the mission of A.G.B.U., if they want to be faithful to their great leader Alex Manoogian. He did not work alone. He worked with the company of many friends. And, let us not forget, that the AGBU was the main channel of his great services to our Church, to our nation, to our motherland of Armenia. Therefore, continue my young dear friends, continue to maintain high the torch to which he added his breath and light through the decades of his leadership as President, as honorary life president.

May God receive his soul in eternal peace and give us all that courage to look into ourselves and to ask what Alex Manoogian is telling to us today, for the continuation of our service to God, to America, to Armenia and to All Armenians in the diaspora.

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ. ընդ ամենեսեանդ ամէն:

## ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*Հուլիսի 15-ին, Քրիստոսի Պայծառակերպության տոնի հաջորդ օրը, Ս. Էջմիածնի Մայր տաճարում, մեռելոցի Ս. Պատարագի արարողությունից հետո, նախագահությամբ Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Հայ Բարեգործական Ընդհանուր Միության պատվավոր նախագահ, ազգային հերոս Ալեք Մանուկյանի:*

*Նորին Սրբությունը իր խոսքում բարձր գնահատեց ազգային մեծ բարերարի՝ իր ժողովրդին ու հայրենիքին մատուցած ծառայությունները, մարդ, որն իր ողջ կյանքի ու գործունեության ընթացքում ապրեց հայրենիքի ճակատագրով, սնվեց նրա ակունքներից, գործեց նրա փառքի համար: Վեհափառ Հայրապետը հատկապես ընդգծեց մեծ բարերարի բերած նպաստն ու խոր նվիրումը Հայ Եկեղեցուն, նրա սրբազնասուրբ կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:*

*Խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետը աղոթք մատուցեց հանգուցյալի հոգու խաղաղության համար:*

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*

# ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐԺԱՆԱՎՈՐ ԶԱՎԱԿԸ

*Դեյտրոյտից ստացված հեռագիրը գուժեց մահը ազգային մեծ բարերար, Հայ Եկեղեցու հավատավոր և նվիրյալ զավակ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության ցկյանս նախագահ, Հայաստանի Հանրապետության Ազգային հերոս Ալեք Մանուկյանի:*

*Հայ ժողովրդի պատմության մեջ Ալեք Մանուկյանը կմնա որպես 20-րդ դարի մեծագույն հայերից մեկը, ում համար նյութական բազմապատկվող հարստությունը, կյանքի նպատակ դառնալու փոխարեն, միշտ եղավ ազգային տարբեր ծրագրեր իրականացնելու միջոց: Ի տարբերություն նախորդ շրջանի մեր ազգային բարերարների, որոնք վաճառականներ կամ ավանդական արհեստների հմուտ վարպետներ էին, նա նման դիրքի և կարողության հասավ արդի արևմտյան աշխարհի ճարտարագիտության ու ձեռնարկատիրության միջոցով, ժամանակակից ամերիկյան տեխնիկական աշխարհի միջավայրում ոչ միայն կարողացավ անաղարտ պահպանել իր ազգային-հոգևոր դիմագիծը, այլև մտահոգվել, որ տարագիր իր հայրենակիցները ևս կուլ չգնան ուծացումի ալիքներին:*

*Ալեք Մանուկյանի կատարած նվիրատվությունների թվարկման մեջ իսկ ուրվագծում են հայի կեցության երկու հիմնասյուները՝ Հայ Եկեղեցին ու դպրոցը, իսկ աշխարհագրականորեն էլ ընդգրկում են աշխարհի քարտեզի երկու կիսագնդերի տարբեր կետերը...*

*Նմանապես նրա ուշադրության կենտրոնում է եղել նաև Հայրենիքը, որի տնտեսության, գիտության և կրթական համակարգի կարգացմանը աջակցել է ժամանակակից տեխնիկայի, սարքավորումների և գիտական գրականության առաքմամբ: Նրա համար հայրենիքը միշտ էլ վեր է եղել այնտեղ իշխող վարչակարգից, և տասնամյակների իր գործունեությունը խոսուն հավաստումն է այն իրողության, որ Հայաստանի հանդեպ հայ մարդու վերաբերմունքը երբեք չպետք է պայմանավորված լինի քաղաքական ըմբռնումներով կամ կուսակցական պատկանելությամբ: Սիմոն ծերունու նման նա ապրեց այնքան, մինչև տեսավ իր հայրենիքում անկախության արեգակի ծագումը և արժանացավ Հայաստանի Հանրապետության բարձրագույն՝ Ազգային հերոսի կոչմանը:*

*Ալեք Մանուկյանը նաև Հայ Եկեղեցու հավատավոր ու ջերմեռանդ զավակի նախաձեռնողությունն ուներ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի*

*հանդեպ: Նրա նվիրատվությամբ կառուցվեց Մայր Աթոռի գանձատունը՝ դառնալով իր հիշատակի կենդանի հավերժացումը: Որդիական այս սիրո, խոնարհումի և բոլորանվեր նվիրումի ու եկեղեցաշեն իրագործումների համար Ալեք Մանուկյանը պարգևատրվել է Հայ Եկեղեցու բարձրագույն՝ Գրիգոր Լուսավորչի շքանշանով:*

*Տարիներ շարունակ երջանկահիշատակ Վազգեն Առաջինի հայրապետական սերն ու մտերմությունը վայելած ազգային մեծ բարերարը կյանքի մայրամուտին հեռավոր Ամերիկայում բախտն ունեցավ նաև ընդառաջ ելնելու Հայաստանի Հանրապետության նախագահին, իսկ մահից քիչ առաջ, կենսական վերջին ուժերը ժողոված, անձամբ դիմավորել ամերիկահայությանը հայրապետական իր առաջին այցելությունը տված Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Նորին Սրբությունը միշտ էլ բարձր է գնահատել Ալեք Մանուկյանի ազգաշահ և եկեղեցանպաստ գործունեությունը:*

*1920 թ. 19-ամյա Ալեք Մանուկյանը Զմյուռնիայից նավով դեպ օտարություն և անհայտություն մեկնեց՝ գրպանում ունենալով ընդամենը հիսուն դոլլար: Անդուլ և համառ աշխատանքի շնորհիվ, սակայն, հաջորդող տասնամյակների ընթացքում հանուն ազգային տարբեր ձեռնարկումների նրա կատարած նվիրատվությունները հասան շուրջ հարյուր միլիոն դոլլարի:*

*Նրա մեծ ցանկությունն էր քաղաքամայր Երևանում կանգնած տեսնել Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարը, որը դառնալու է վերանորոգ Հայաստանում Հայ Եկեղեցու վերածաղկման ամենապերճախոս վկայությունը:*

*Վստահ ենք, որ կկատարվի ազգային մեծ բարերարի կամքը և նրա վերջին ծրագրումը՝ հանձինս 2001 թ. վեր հառնելիք Տաճարի, որի որմերին անջնջելիորեն կդրոշմվի և իր անունը:*

*«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս, խորապես վշտացած Ալեք Մանուկյանի մահվամբ, իր վշտակցությունն է հայտնում Մանուկյան ընտանիքին՝ հայցելով Սուրբ Հոգու Մխիթարությունը:*

*«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:*